ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

04 մայիսի 2026թ. **N 111-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՂԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍԻ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ՄՅՈՒՍ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով, 93-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչության ժամանակ՝

1) հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների կողմից եթերաժամ տրամադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հանրային տեսալսողական և հանրային լսողական հեռարձակողի եթերով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի մայիսի 04
ք. Երևան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2026թ. մայիսի 04-ի թիվ 111-Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՂԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍԻ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ՄՅՈՒՍ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին (այսուհետ՝ կուսակցություն) նախընտրական քարոզչության ժամանակ հանրային տեսալսողական հեռարձակողի (այուհետ նաև՝ հանրային հեռուստատեսություն և (կամ) հանրային լսողական հեռարձակողի (այսուհետ նաև՝ հանրային ռադիո) կողմից եթերաժամ տրամադրվում է հավասար պայմաններով՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) և սույն կարգի պահանջներին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների ժամանակ հանրային հեռարձակողները պարտավոր են ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ապահովել ոչ խտրական պայմաններ:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով Հանրային հեռարձակողի «Առաջին ալիք» և «Առաջինի լրատվական ալիք» ծրագրերից յուրաքանչյուրով տրամադրվում է ոչ ավելի, քան 90 րոպե անվճար և ոչ ավելի, քան 120 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամ, ընդ որում՝

1) անվճար հիմունքներով՝

ա) 2026թ. մայիսի 8-ից մինչև 2026թ. հունիսի 2-ը ներառյալ (26 օր)՝ օրը 3-ական րոպե անվճար հիմունքներով,

բ) 2026թ. հունիսի 3-ից մինչև 2026թ. հունիսի 5-ը ներառյալ (3 օր)՝ օրը 4-ական րոպե անվճար հիմունքներով,

2) վճարովի հիմունքներով՝

ա) 2026թ. մայիսի 8-ից մինչև 2026թ. հունիսի 1-ը ներառյալ (25 օր)՝ օրը 4-ական րոպե վճարովի հիմունքներով,

բ) 2026թ. հունիսի 2-ից մինչև 2026թ. հունիսի 5-ը ներառյալ (4 օր)՝ օրը 5-ական րոպե վճարովի հիմունքներով:

Սույն կետով սահմանված եթերաժամերը տրամադրվում են ժամը 18:00-ից՝ սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

4. Հայաստանի հանրային հեռուստաընկերության անվճար և վճարովի եթերաժամերի ժամանակ ապահովվում է հայերեն ժեստերի լեզվով թարգմանություն: Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերով նախընտրական քարոզչության հետ կապված տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ապահովվում են հայերեն ենթագրերով:

5. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռարձակողի «Առաջին ծրագիր» լսողական ծրագրով, տրամադրվում է ոչ ավելի, քան 150 րոպե անվճար և ոչ ավելի, քան 180 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամ, ընդ որում՝

1) անվճար հիմունքներով՝

ա) 2026թ. մայիսի 8-ից մինչև 2026թ. մայիսի 31-ը ներառյալ (24 օր)՝ օրը 5-ական րոպե անվճար հիմունքներով,

բ) 2026թ. հունիսի 1-ից մինչև 2026թ. հունիսի 5-ը ներառյալ (5 օր)՝ օրը 6-ական րոպե անվճար հիմունքներով,

2) վճարովի հիմունքներով՝

ա) 2026թ. մայիսի 8-ից մինչև 2026թ. մայիսի 30-ը ներառյալ (23 օր)՝ օրը 6-ական րոպե վճարովի հիմունքներով,

բ) 2026թ. մայիսի 31-ից մինչև 2026թ. հունիսի 5-ը ներառյալ (6 օր)՝ օրը 7-ական րոպե վճարովի հիմունքներով:

Սույն կետով սահմանված եթերաժամը տրամադրվում է ժամը 13:30-ից՝ սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

6. Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով, հանրային հեռարձակողների կողմից սույն կարգի 3-րդ և 5-րդ կետերում նշված ժամանակահատվածը կարող է տեղաշարժվել, բայց ոչ ավելի, քան 30 րոպե՝ որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

7. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի վճարովի եթերաժամը տրամադրվում է անվճար եթերաժամանակի հետ միաժամանակ՝ անվճար եթերաժամանակի համար սահմանված հերթին համապատասխան:

8. Սույն կարգի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված եթերաժամ տրամադրելու համար պայմանագիր կնքելիս կուսակցության անունից կարող է հանդես գալ կուսակցության լիազոր ներկայացուցիչը կամ կուսակցության կողմից լիազորված այլ անձ: Պայմանագիր կնքելու համար ներկայացվում է կուսակցության լիազոր ներկայացուցչի սահմանված նմուշի վկայականի լուսապատճենը կամ կուսակցության կողմից տրված լիազորագիրը, լիազոր ներկայացուցչի կամ լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը, վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար՝

նաև կուսակցության նախընտրական հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվեհամարը:

9. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26 հասցեով (հեռ. (+374) 94 200-014, էլ. փոստ՝ meri.meliksetyan@1tv.am), իսկ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության հետ պայմանագիր կնքելու համար՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով (հեռ. (+374) 93 516-143, էլ.փոստ՝ n.chorekchyan@armradio.am):

Պայմանագիրը պետք է կնքվի առաջին եթերաժամից ոչ ուշ, քան 1 օր առաջ:

10. Նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ կամ հանրային ռադիոյով տրամադրվում է ուղիղ եթեր, ընտրություններին մասնակցող կուսակցության ցանկությամբ՝ նաև հաղորդավարի մասնակցությամբ, կամ հեռարձակվում է կուսակցության կողմից ներկայացված տեսաերիզը (ձայներիզը): Հաղորդավար տրամադրվելու դեպքում՝ պահպանվում է լրագրողի գործունեության ազատության սկզբունքը:

11. Կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կամ գրանցումն անվավեր ճանաչվելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կնքված՝ նախընտրական քարոզչության նպատակով եթերաժամ տրամադրելու պայմանագիրը համարվում է ուժը կորցրած, և դադարեցվում է նախընտրական քարոզչության նպատակով եթերաժամի տրամադրումը:

12. Ուղիղ եթերից օգտվելու դեպքում՝ կուսակցության ներկայացուցիչը համապատասխանաբար «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությանը կամ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությանը պետք է գրավոր տեղեկացնի համապատասխան օրվա մինչև ժամը 12.00-ն և ներկայանա հերթական եթերաժամից առնվազն 30 րոպե առաջ:

13. Տեսանյութեր հեռարձակելու դեպքում՝ այդ տեսանյութերը պետք է ներկայացվեն «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերություն (ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26) ոչ ուշ, քան համապատասխան տեսանյութը հեռարձակելու օրվա ժամը 15:00-ն, որոնք պետք է համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին՝

Ֆորմատ՝ MXF

Video – HD 1920 x 1080

Frame rate - 50i (25 fps)

Video Bit Rate – 35 Mbps, VBR

Ձայներիզներ հեռարձակելու դեպքում՝ այդ ձայներիզները «WAV» կամ «MP3» ֆորմատով պետք է ներկայացվեն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերություն (ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, Ռադիոտուն) նախընտրական քարոզչության համար սահմանված եթերաժամի սկզբից՝ առնվազն 2 ժամ առաջ:

14. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի եթերաժամը սույն որոշմամբ սահմանված ժամանակացույցին համապատասխան չօգտագործելու դեպքում՝ կուսակցությանը դրա փոխարեն այլ եթերաժամ չի տրամադրվում:

15. Հանրային հեռուստատեսությամբ կամ հանրային ռադիոյով նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով կուսակցությանը տրամադրված եթերաժամն այլ կուսակցության կամ նրա ներկայացուցչի կողմից օգտագործվել չի կարող:

16. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների կողմից՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով տրամադրվում է ոչ ավելի, քան 25-ական րոպե անվճար եթերաժամ:

17. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների կողմից՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով կարող է տրամադրվել վճարովի հիմունքներով եթերաժամանակ:

18. Նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողները բոլոր կուսակցությունների համար պետք է ապահովեն հավասար և միատեսակ պայմաններ:

19. Եթե նույն օրվա ընթացքում Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների կողմից, վճարովի հիմունքներով եթերաժամանակ է տրամադրվելու մեկից ավելի կուսակցությունների և առկա չէ համաձայնություն հեռարձակման հերթականության վերաբերյալ, ապա հեռարձակումն իրականացվում է սույն որոշման N 2 հավելվածով սահմանված հերթականությամբ:

20. Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի սույն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողին:

21. Սույն կարգով սահմանված վճարովի հիմունքներով եթերաժամերից օգտվելու համար վճարումները կատարվում են համապատասխան կուսակցության նախընտրական հիմնադրամի միջոցներից՝ անկանխիկ եղանակով (փոխանցումով):

22. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից կուսակցությանը ուղիղ եթերից վճարովի հիմունքներով եթերաժամ տրամադրվում է, եթե ուղիղ եթերից օգտվելու գրավոր տեղեկացման հետ միաժամանակ ներկայացվում է նաև կուսակցության նախընտրական հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվից անկանխիկ վճարման (փոխանցման) կնքված հանձնարարականը:

23. Սույն կարգի 13-րդ կետով սահմանված տեսանյութեր հեռարձակելու դեպքում, Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից կուսակցությանը վճարովի հիմունքներով եթերաժամ տրամադրվում է, եթե տեսանյութի ներկայացման հետ միաժամանակ ներկայացվում է նաև կուսակցության նախընտրական հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվից անկանխիկ վճարման (փոխանցման) կնքված հանձնարարականը:

24. Հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերով նախընտրական քարոզչության տեսանյութերում Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից եթե օգտագործվում են արհեստական բանականությամբ կամ այլ սինթետիկ տեխնոլոգիաներով ստեղծված կամ փոփոխված նյութեր, ապա պարտավոր են իրենց կողմից ներկայացված տեսալսողական նյութերում ապահովել սինթետիկ բովանդակության հստակ, լսելի կամ տեսանելի և ընթեռնելի մակնշում՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված կարգով:

25. Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությունը՝ Հանրային հեռուստատեսության, հանրային ռադիոի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերում պարտավոր է պահպանել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները:

26. Արգելվում է նախընտրական քարոզչությանը վերաբերող տեսալսողական հաղորդումներն ընդմիջել առևտրային գովազդով:

27. Նախընտրական քարոզչությանը վերաբերող տեսալսողական հաղորդումները հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը:

28. Ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողներին տրամադրվող տեսաերիզների տրամադրման կարգը, ժամկետները, տեսանյութերի ֆորմատին ներկայացվող պահանջները, վճարովի եթերաժամի դեպքում՝ վճարման ժամկետները, ինչպես նաև սույն որոշմամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են կուսակցության և համապատասխան հեռարձակողի միջև կնքվող պայմանագրով:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2026թ. մայիսի 04-ի թիվ 111-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ԱՄԻՍ	ՄԱՅԻՍ																									ՀՈՒՆԻՍ				
ՕՐ	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	1	2	3	4	5
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																												
ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16
«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1
«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13
«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2
«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17
«ՔՈՉԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱԶԳԻ ՁԱՐԹՈՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3
«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7
ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8
«ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4
«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5
«ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6
«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	19	18	17	16	15	14	13	12	11	10	9

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1-ից 19-ը թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2026թ. մայիսի 04-ի թիվ 111-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍԻ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ՄՅՈՒՍ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐ

Հ/Հ	Ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվանումը	Իրավաբանական հասցե	էլ. փոստի հասցե	Հեռախոս
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
1	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան Եղբայրների փող. 2	epikentron@mail.ru info@kentron.tv	096 69 79 29
2	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Եղվարդի խճուղի 1	info@armeniatv.am david.babakhanyan@gmail.com	094 00 06 24
3	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Եղվարդի խճուղի 1	yelenarshakyan@gmail.com info@atv.am	055 82 88 42
4	«ՇԱՆԹ» ՍՊԸ	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան փող., հեռուստակենտրոն	info@shanttv.am arthur@shanttv.am	091 42 65 50
5	«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան փող., շ. 20	info@fastmedia.am narek.gyulumyan@softconstruct.com	055 02 93 24
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ				
1	«ՇԱՐԿ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան փող., 8 շ., բն. 26	info@5tv.am harutyun.harutyunyan@5tv.am	099 00 81 48 096 62 67 37
2	«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ն. Դուման փող. 62	arpimedia.broadcast@gmail.com info@arpimedia.am	077 91 30 40
3	«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պող. 1/4	info@freenews.am margaryan.mariam@yahoo.com	098 32 99 90
4	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հրազդանի կիրճ 4/2	dasatryan70@gmail.com info@21tv.am	055 62 78 61
5	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցու փող., շ. 45/5	norhayastan@mediahouse.am arm.media@me.com	093 55 50 00 095 69 95 95
6	«ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան փող., շ. 133	boon@boon.am	093 00 80 04

ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ				
1	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Բուլվարային փող., տ. 20	deltatv@gyumri.am deltatv@deltatv.am	077 83 06 04 099 99 87 60
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ				
1	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Զավարյան փող. 57/4	ararattv1234@gmail.com info@ararattv.am	077 97 22 82
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ				
1	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Իսահակյան փող., շ. 32 ա	info@armatv.am info@aranea.am	077 91 30 40
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ				
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Ս. Սևանեցու փող., շ. 6	stv1@list.ru	093 23 34 05
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ				
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	ՀՀ, Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Հոկտեմբերյան փող., շ. 65	karen_arshakyan@mail.ru fortuna-tv@mail.ru	095 51 22 84 091 15 57 67
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ				
1	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Օգոստոսի 23, թիվ 1/4	kotayktv@gmail.com	098 17 30 08
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ				
1	«ՑԱՅԳ» ՍՊԸ	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան փող., շ. 248	tsaygtvr@gmail.com	098 90 12 93 093 95 05 43
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ				
1	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մելիքյան փող. 8	info@syunik.tv	098 33 38 04 093 19 03 52
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ				
1	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մելիքյան փող. 8	info@syunik.tv	098 33 38 04 093 19 03 52
ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ				
1	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի փող., շ. 29, բն. 52	info@tavushmedia.am head@tavushmedia.am	093 57 55 35